ուղարկող՝ *info@tatevedu.am*
ստացող՝ armavir@mta.gov.am

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Տաթև գիտակրթական համալիրը» կազմակերպում է 90-ժամյա վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:
Դասընթացները կանցկացվեն Երևանում՝ «Տաթև գիտակրթական համալիրում», հասցեն՝ Կոմիտասի պողոտա, 49/2 շենք, 5-րդ հարկ:
Դիմումներն ընդունվում են ս/թ հունիսի 7-ից 24-ը ներառյալ՝ «Տաթև գիտակրթական համալիրում» (2-րդ հարկ) աշխատանքային օրերին՝ ժ. 900-1730-ը, իսկ շաբաթ՝ ժ. 1100-1700-ը):

Դասընթացները կմեկնարկվեն հունիսի 25-ին և կավարտվեն մինչև հուլիսի 17-ը:

Վերապատրաստման դասընթացներին կարող են մասնակցել այն անձինք, որոնք ունեն բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:
Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- «Տաթև գիտակրթական համալիրի» տնօրենի անունով դիմում (ձև 1, լրացվում է տեղում),
- 3x4 չափի երկու լուսանկար,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքը,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը):
- «Տաթև գիտակրթական համալիրի» «Ինեկոբանկ» ՓԲԸ (հաշվարկային) 2052822083911001 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը (կարող է իրականացվել նաև սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող գումարի փոխանցում):

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1-12765-2021
11 06 2021 թ.

Փաստաթղթերի պատճենների հետ անհրաժեշտ է ներկայացնել նաև բնօրինակները, որոնք տեղում կվերադարձվեն:
Դասընթացները կվարեն փորձառու և հմուտ վերապատրաստողներ և մասնագետներ:
Վերապատրաստումները կանցկացվեն բարեկարգ և տեխնիկապես հագեցած լսարաններում՝ առկա, հեռավար և հիբրիդային եղանակներով (մասնակցի ընտրությամբ):
Վերապատրաստման դասընթացի արժեքը 80.000 ՀՀ դրամ է: Մասնակիցներին կտրամադրվեն նաև գրենական պիտույքներ, տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութեր, կկազմակերպվեն սուրճի և սննդի ընդմիջումներ:
Իհարկե, սա դեռ ամենը չէ, ինչի համար պետք է ընտրել «Տաթև գիտակրթական համալիրի» դասընթացները: Մյուս առավելությունը երկիերթ դասընթացներն են՝ ժ. 900-1400 կամ ժ. 1430-1930 ժամանակացույցով:
Հարցերի դեպքում կարող եք գրել tateveducational@gmail.com էլեկտրոնային հասցեին կամ զանգահարել 010232648, բջջ՝ 033 22 33 26 հեռախոսահամարներով: